ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«17» Հունվարի 2020թ.-ի N 2

## «ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՓՈՂՈՑԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՑԱՆՑԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ» ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԵՎ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄ՝ ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 25-րդ ենթակետի պահանջներով և նկատի ունենալով, որ համայնքային ֆինանսական ներդրումներ կատարելու պայմանով 2020թ. ՀՀ բյուջեից համայնքներին հատկացվելու են նպատակային հատկացումներ՝ սուբվենցիաներ՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Համաձայնել համայնքի ղեկավարի առաջարկությանը և թույլատրել ներկայացնելու «Գեղարքունիք համայնքի փողոցային լուսավորության արտաքին ցանցի վերակառուցման» աշխատանքների կատարման ծրագիրը:
2. Սուբսիդիայի ստացման համար գործող կարգով կազմել և ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան ներկայացնել «Գեղարքունիք համայնքի փողոցային լուսավորության արտաքին ցանցի վերակառուցման» աշխատանքների կատարման ծրագրի ֆինանսավորման հայտը:
3. Սահմանել, որ ծրագրի ներկայացման համար համայնքի 2020թվականի բյուջեով բավարար ֆինանսական միջոցներ են նախատեսված ծրագիրը իրականացնելու և համայնքային ներդրում կատարելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից

Կողմ - 4 Դեմ 0 Ձեռնպահ 0

Ավագանու անդամներ՝ Ասատրյան Վանիկ Ն.

Կարապետյան Զավեն Ա.

Հակոբյան Արմեն Վ.

Միրիջյան Մարտին Ռ.

Գեղարքունիք համայնքի ղեկավար՝ Ա. Աբրահամյան